ՐԱՖՖԻ

Հարեմ

1 - Ի, ԻԱ

Ավազակապետը Քերիմ-բեկի հետ, դառնալով դեպի քաղաքը, գտան դարվազաները կողպված:

Ո՞րտեղից մտնենք, հուսահատությամբ հարցրուց Քերիմ-բեկը:

Հեշտ է, ե՛կ, ասաց ավազակապետը, և մինչև հիսուն քայլ բոլորեց շրջապարիսպը, և կանգնեց պատի մոտ:

Նա արձակեց յուր մեջքից երկայն մետաքսյա պարանը, որի գլխին ամրացուցած էր արճիճից մի գնդակ:

Ձգեց գնդակը դեպի վեր, պարանը բռնեց պարսպի ատամնավոր բարձրությունից, իսկ արճիճն իջավ ցած: Ավազակապետը պարանի երկու ծայրերը ձեռքին բռնելով, սարդի արագությամբ վեր բարձրացավ պարսպի վրա: Այնուհետև նա կրկին իջեցրեց պարանը և Քերիմ-Բեկը հետևեց նրա օրինակին: Մի րոպեից հետո երկուսն էլ պարսպի վրա էին: Այնուհետև նույն մետաքսյա սանդուղքի միջոցով նրանք իջան պարսպի մյուս կողմը:

Անցնելով նեղ, ոլոր-մոլոր շուկաներից, շուտով նրանք հայտնվեցին իշխանի ամրոցի մոտ:

Այժմ ի՛նչպես դուրս կանչել այդ սևերին, բոլոր դռները փակ են, ասաց Քերիմ-բեկը:

Թե քնած չլինեն, հեշտ է, պատասխանեց ավազակապետը:

Ի՞նչպես:

Ես նրանց լեզուն գիտեմ...: Եկե՛ք:

Նրանք անցան հարեմխանայի պատի կողմը, որտեղից մոտ էր Զեյնաբ-խանումի կացարանը: Ավազակապետը սագի սուր ձգական ձայնով երեք անգամ նշան տվեց: Ամրոցի խորքից պատասխանեցին միևնույն ձայնով:

Հասկացան, ասաց ավազակապետը հազիվ լսելի ձայնով:

Այստեղ սպասե՞նք:

Մի՛ շարժվի՛ր:

Քանի րոպեից հետո խավարի միջից երևան եղավ մի ստվեր: Դա Սայիդն էր: Քերիմ-բեկը հայտնեց նրան բոլորը: Եթովպացին ուրախությունից արձակեց մի տեսակ հառաչանք, որ ավելի նման էր թռչունների ծվծվոցին:

Դուք այդ դռանը սպասեցեք, ցույց տվեց նա և հեռացավ:

Նրանք մոտեցան այն դռանը, որ ուղիղ բացվում էր հարեմ-խանայի մեջ: Իսկ Սայիդը ներս գնաց այն մուտքով, որտեղից որ եկել էր:

Քանի րոպեից հետո, նրանք լսեցին դռան հետևից մի այդպիսի խոսակցություն.

Բաց արա՛ դուռը:

Ի՞նչու:

Կախարդը գալիս է:

Ա՛խ, այդ անիծված կախարդը հանգստություն չէ տալիս . . . ասաց քնաթաթախ դռնապանը և դժգոհությամբ սկսավ դարձնել բանալիները:

Դռները բացվեցան: Ավազակապետը և յուր ընկերը հետ քաշվեցան:

Ո՞ւր է կախարդը, հարցրուց դռնապանը:

Մենք գնում ենք նրան կանչենք, ասաց Սայիդը:

Հրամայված է ոչ ոքին դուրս չթողնել, մինչև ներքինապետն ինքը թույլ չտա:

Զեյնաբ-խանումն ինքն ուղարկեց մեզ:

Չեմ կարող:

Մինչ նրանք այդ վիճաբանության մեջ էին, ավազակապետը վրա հասավ: Նա մի կողմ հրելով դռնապանին. դուք գնացեք, ասաց Սայիդին ու Մարջանին:

Խափշիկը և եթովպացին դուրս վազեցին: Դռնապանը փորձ փորձեց հարա տալ, բայց իսկույն ավազակապետի դաշույնը ցցվեցավ նրա կոկորդի մեջ և ներքինին գետին գլորվեցավ:

Հիմա նա կպոռա և բոլոր ամրոցը մեր գլխին կհավաքե, ասաց Մարջանը դողալով: Նա էլ ձայն չի հանի...: Գնա՛նք, պատասխանեց ավազակապետը:

Երբ բավականին հեռացան ամրոցից, նրանք պետք է անցնեին Սեր-Ասքերի դռնից:

Ես պետք է գոնյա վերջին անգամ մտնեմ այստեղ, ասաց Քերիմ-բեկը:

Ի՞նչ կա, հարցրուց ավազակապետը: Ժամանակ ենք կորցնում:

Շուտով դուրս կգամ: Պետք է վեր առնել մի քանի բաներ:

Թե փողի համար է, մեզ մոտ կա, որքան ուզես:

Չէ՛, ես չեմ կարող թողնել զենքերս և ձին:

Գնա՛: Քեզ կսպասենք քանդված մզկիթի մոտ:

Քերիմ-բեկը, մոտենալով Սեր-Ասքերի դռանը, պահապանները ճանաչեցին նրան, իսկույն բաց արին մուտքը: Նա դիմեց դեպի յուր կացարանը, որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ գտավ յուր սենյակը ներսից կողպված: Նա հեզիկ զարկեց դուռը, լսելի եղավ մի քնքուշ ձայն, որ ավելի նման էր մետալական հնչումի: Դուռ բացվեցավ, երիտասարդը ներս մտավ: Խավարի մեջ երկու ձեռք փաթաթվեցան նրա պարանոցով... ջերմ շրթունքները սեղմվեցան նրա թշին և մի էակ ընկավ նրա գիրկը . . .

Երկար նրանք մնացին այդ անբարբառ հոգեզմայլության մեջ, մինչև երիտասարդը, ազատվեցավ նրա գրկից, վառեց ճրագը: Քերիմ-բեկի սենյակում գիշերային հսկողը Սեր-Ասքերի դուստրն օրիորդ Մահին էր:

Ա՛խ, Մահի, դու, այս կես գիշերի՞ն... ա՞յստեղ... ձայն արձակեց երիտասարդը:

Ամբողջ օրը քեզ չէի տեսել, միշտ աչքս քեզ էր պտրում... պատասխանեց օրիորդը վշտալի ձայնով:

Ինչպե՞ս եկար այստեղ:

Հայրս, մայրս քնեցին, իմ քունը չէր տանում, կամաց սենյակից դուրս եկա, կտուրի վրայից անցնելով՝ մտա այստեղ:

Բայց եթե ես չգա՞յի:

Ես կմնայի այստեղ և մինչև առավոտ լաց կլինեի:

Եվ իրավ երիտասարդը նկատեց,որ արտասուքը դեռ չէր չորացել օրիորդի աչքերից:

Երիտասարդն ընկավ սարսափելի խռովության մեջ: Երկու հակառակ վրդովմունք սկսան հուզվիլ նրա սրտում:

Այդ սիրո փոթորիկն էր... Նույն րոպեին երկու պատկերներ նկատվեցան երիտասարդի ալքի առջև, մինը դեռահաս և կրակոտ Մահին, մյուսը վշտալի և անբախտ Ալմաստը, որ ավազակների խումբի մեջ սպասում էր նրան: Որի՞ն տալ գերազանցությունը: Քերիմ-բեկը ընտրել էր վերջինը և հաստատ մնաց յուր ընտրության մեջ: Բայց մի միտք միայն տանջում էր նրան, թե ի՞նչպես հեռացնել Մահիին, որ ինքը կարողանա դուրս գնալ: Նա սկսեց կրել յուր զենքերը:

Օրիորդը, տեսնելով նրա անհանգիստ դեմքը, հարցրուց.

Դու տխուր ես, Քերիմ, դու մի տեղ ուզում ես գնալ:

Հա՛, Մահի ջան, այս րոպեիս վատ լուր հասավ ինձ, ավազակները հարձակվել են մեր մոտակա գյուղի վրա, շտապում եմ օգնության հասնել խեղճ գյուղացիներին:

Այս խոսքերը ցավալի կերպով ազդեցին օրիորդի սրտին:

Ո՛վ, գիտե, կսպանեն նրանց... ասաց նա դողալով:

Կսպանեն և ամեն ինչ կկողոպտեն:

Հորս չե՞ս հայտնում:

Չեմ ուզում նրան անհանգստացնել:

Հա, այդպես, մի նեղացրու հորս, առավոտյան նա ճանապարհ պիտի գնա:

Վերջին խոսքը շարժեց երիտասարդի հետաքրքրությունը:

Ո՞ւր պիտի գնա, հարցրուց նա:

Չեմ իմանում, մայրս ասում էր պատերազմ կա, պիտի գնա յուր ղոշունի հետ:

Երիտասարդը հասկացավ Սեր-Ասքերի Թեհրանից հեռանալու պատճառը: Նա պատրաստ էր:

Դո՛ւ գնա, Մահի ջան, թող քեզ չտեսնեն, ես ուզում եմ կանչել ծառային, ասաց նա, օրիորդի փոքրիկ ձեռները առնելով յուր ափի մեջ:

Էգուց գիշեր էլ կգամ, խոսեց օրիորդը ժպտելով:

Եկ, ես այստեղ կլինեմ:

Տե՛ս, չխաբե՞ս:

Չեմ խաբի՛...

Օրիորդը կրկին ընկավ երիտասարդի գիրկ: Քերիմ-բեկը քաղեց նրա թշերից յուր վերջին համբույրները...

Մահին հեռացավ: Տե'ս, կգամ ես հենց էս ժամուն, ասաց նա դռնից կրկին անգամ նայելով երիտասարդի վրա:

«Խե՜ղջ աղջիկ...» խոսեց յուր մտքում երիտասարդը և նրա դեմքը պատեցին տխրության ամպերը... Քերիմ-բեկը կանչեց յուր ծառային, որ քնած էր նախասենյակում:

Գնա՛, շուտով իմ ձիերը երկուսն էլ թամքիր, հրամայեց նրան:

Քնահարամ ծառան աչքերը տրորելով վազեց դեպի ախոռատուն: Քերիմ-բեկը առավ յուր փոքրիկ խուրջինը, մոտեցավ մի արկղի, հանեց նրանից մի քանի ծանր քսակներ: Սև օրվա համար հարկավոր կլինի, ասաց և դրեց խուրջինում:

Շուտով դարձավ ծառան և հայտնեց թե ձիերը պատրաստ են:

Վե՛ր առ այդ խուրջինը:

Երկուսը միասին դուրս գնացին: Խուրջինը կապեցին ձիու մեջքի վրա, երիտասարդը հեծավ: Իսկ ծառան հարցրուց.

Հրամայում ե՛ք, այդ մյուս ձին ես նստեմ և ձեզ հետ գամ:

Չէ՛, պատասխանեց երիտասարդը: Տուր ինձ սանձը:

Նա առավ մյուս ձիու սանձը, և հետքից քարշ տալով, աներևութացավ խավարի մեջ:

ԻԱ

Քերիմ-Բեկը շուտով հասավ քանդված մզկիթին, ուր ավազակապետը սպասում էր նրան:

Բարեկամ, ուշանում ենք, ասաց նա, դուք ցած եկեք ձիուց, թո՛ղ սևերը նստեն, մինչև քաղաքից դուրս գանք:

Քերիմ-բեկը մտածելով, որ առանց խորհրդի չէր այդ առաջարկությունը, ձիաների երկուսն էլ հանձնեց սևերին: Նրանք ճանապարհ ընկան: Գիշերը հանդարտ էր և հովասուն: Շների խառնաձայն հաչելու ձայնը միայն ընդհատում էր տիրող լռությունը:

Դուրս գալով բազարի միջից, նրանք տեսան ուղղակի յուրյանց առաջ էին գալիս մի խումբ գիշերապահ զինվորներ: Զարտուղել ճանապարհը չէր կարելի:

Այդ անպիտանների հետ կհարկավորի ծեծվել, Դուք քանի՞ կրակ ունենք, հարցրուց ավազակապետը Քերիմ-բեկից:

Երկու զույգ ատրճանակներ գոտիումս, երկուսն էլ թամբի վրա, մի հատ կարաբինա, պատասխանեց նա:

Բավական է:

Մի զույգ էլ ես ունեմ, պատասխանեց Սայիդը: Դու քո ընկերուհու հետ միայն պահեք ձիաները, ասաց ավազակապետը: Գիշերապահները մոտեցան:

Գիշերվա անո՞ւնը, հարցրուց նրանցից մինը:

Անցե՛ք, ձայն տվեց ավազակապետը:

Դարուղան հրամայել է բռնել, ով կհանդիպե: Երեք ժամ առաջ կողոպտեցին Բարձրագույն դռան սեղանավորի տունը:

Մենք ավազակներ չենք:

Ուղիղ մարդը հիմա չի ման գա, այն ևս առանց լապտերի:

Կնի՛կ էլ ունեն յուրյանց հետ, ձայն տվեց մի այլը:

Մեկ խոսքով, ի՞նչ է ձեր միտքը, հարցրուց ավազակապետը հառաջ գնալով:

Դուք ընկերիդ հետ և այգ խանումի հետ, ցույց տվեց պահապանների առաջնորդը Մարջանի վրա, շնորհ կբերեք մոտավոր ղարավուլխանան, այնտեղ մեզ հյուր կլինեք, մինչև առավոտը դարուղան կտեսնե ձեզ:

Այդ առաջարկությունը մահու խնդիր էր, թե ավազակապետի և թե նրա ուղեկիցների համար: Այդ պատճառով նրանք վճռեցին մինչև Վերջին շունչն ընդդիմանալ:

Պարոն, քո արյունը կարծես ծանրություն է անում, պատասխանեց ավազակապետը սառնությամբ:

Այդ ուղիղ է, այս տարի երակս չեմ կտրել:

Ավազակապետը վերարկուն առավ յուր վրայիցը, փաթաթեց ձախ թևքը, յուր համար վահանակ շինեց, և ահագին սուրը մերկացնելով, հրավեր կարդաց՝

Հրամայեցեք:

Գիշերապահները գազանի նման հարձակվեցան: Նրանք թվով ութը հոգի էին: Կռիվը տաքացավ: Սայիդը Վայր իջավ ձիուց, սանձը հանձնեց Մարջանին և պատվիրեց որ հեռու կենա կռվողներից: Նույն միջոցին ավազակապետը, յուր սուրը դուրս քաշելով գիշերապահների մեծավորի կուրծքից, ասաց.

Ամենահմուտ դալլաքը այդպես արյուն չէր կարող առնել քեզանից:

Նա ձաչն չհանեց և թավալվեցավ դետին: Երկու հոգի հարձակվեցան Քերիմ-բեկի վրա, նա յուր դաշույնով ծակեց մինի կողքը և ճեղքեց մյուսի գլուխը: Առաջինն ընկավ, բայց վերջինը քիչ էր մնում հարվածեր երիտասարդին, երբ Սայիդի ատրճանակը ծըխաց նրա կուրծքի մեջ:

Քերիմ-բեկը տեսավ, ավազակապետը շրջապատված էր մի քանի հոգիով և կատաղի կերպով պաշտպանում էր յուրյանց: Նա առյուծի պես գետին գլորեց մինին, որ պատրաստվում էր յուր հրացանը արձակել ավազակապետի վրա: Նույն միջոցին թիկունքից ստացավ մի նոր հարված, բայց կռվի տաքության մեջ ոչինչ չզգաց: Նա հետ դարձավ, երբ զարկողը ուզեց կրկնել յուր հարվածը: Քերիմբեկի ատրճանակը որոտաց, հակառակորդը ընկավ:

Ես վերջացրի իմ գործը, մոտենալով ասաց ավազակապետը երիտասարդին:

Իսկ դրա՞նք, հարցրուց Քերիմ-բեկը:

Թող գնան, խեղճ են...

Եվ իրավ գիշերապահներից երեքը տեսնելով յուրյանց ընկերներից հինգն ընկած, թողեցին և փախան:

Այժմ նստիր ձիուդ, խոսեց ավազակապետը, ինքն հեծնելով մյուս ձիու վրա: Սևերի ամեն մինը առնենք մեր ձիու գավակը:

Շուտով հասան նրանք քաղաքաղռներից մինին, որ փակ էր: Դռնապանը երկար ընդդիմանում էր չբաց անել բայց Քերիմ-բեկը դնելով նրա ձեռքը մի քանի հատ ոսկի, նա հոժարացավ կեղծել յուր պարտավորությունը:

Նրանք բավականին հեռացել էին քաղաքից, երբ Մարջանը, որ նստած էր Քերիմ-բեկի հեծած ձիու գավակին, հանկարծ ձայն արձակեց:

Արյո՞ւն է հոսում...

Ո՞րտեղից, հարցրուց Քերիմ-բեկը շփոթվելով և ձեռքը տարավ դեպի մեջքը, տեսավ, հագուստը թաց էր եղած:

Ավազակապետը մոտեցավ հարցնելով՝ ի՞նչ է:

Ոչինչ, պատասխանեց Քերիմ-բեկը: Ունե՞ս քեզ հետ խանզարութ:

Ես առանց դրան չեմ լինում, ասաց ավազակապետը, ձիուցը վայր իջավ:

Նա վառեց կծկած մոմպատը, որ գրպանումը ուներ և շուտով փաթաթեց Քերիմ-բեկի վերքը:

Քաջը լավ է դիպցրել, ասաց ավազակապետը բայց անվնաս է:

Աղան էլ մի լավ գնդակ ուտեցրեց այն քաջին, վրա բերեց Սայիդը: Նրանք կրկին հեծան ձիաները և շարունակեցին ճանապարհը դեպի Կ... ամրոցի ավերակները: Արշալույսը դեռ նոր սկսել էր շառագունիլ, երբ նրանք հասան ամրոցին: Ավազակապետը գտավ յուր ընկերներին բոլորովին պատրաստ:

Ալմաստը, տեսնելով Քերիմ-բեկին, վազեց նրա առաջ: Նա ուրախացավ, երբ տեսավ Մարջանին և Սայիդին: Բայց թե խափշիկը և թե եթովպացին երկուսն էլ սկզբից չկարողացան ճանաչել յուրյանց տիրուհին ծպտյալ հագուստով: Խափշիկը տվեց Ալմաստին մի գեղեցիկ արծաթյա արկղիկ, ասելով.

Ձեր աղախինը չմոռացավ յուր հետ բերել:

Ալմաստը ուրախությամբ առեց արկղիկը:

Այդ ի՞նչ է,- հարցրուց Քերիմ-բեկը:

Իմ բոլոր հարստությունը, իմ գոհարեղենները:

Քերիմ-բեկը ծիծաղելով առեց արկղիկը, դրեց յուր խուրջինը:

Մասլահաթի ժամանակ չէ՛,- լսելի եղավ ավազակապետի ձայնը, գնանք, լուսանում է:

Քերիմ-բեկն յուր հետ բերած ձին տվեց Ալմաստին, երկու ձիաներ ևս որոշեցին Սայիդի և Մարջանի համար: Նրանք ճանապարհ ընկան դեպի յուրյանց բնիկ

հայրենիքը-դեպի Հայաստան...